

# Կացարանների տրամադրման ռեսուրսներ հոգեկան առողջության անկարողություններ ունեցող մարդկանց համար

2014 թվականի մարտ, թիվ CM34.10 հրատարակություն

## **1. Արդյոք Կալիֆորնիայում հոգեկան առողջության անկարողություն ունեցող մարդկանց համար առկա՞ են մատչելի կացարաններ:**

Այո: Մատչելի կացարանները տրամադրվում են մի շարք նահանգային և դաշնային ծրագրերի շրջանակում: Այդ ծրագրերից որոշ մասի շրջանակում տրամադրվում է «մշտական աջակցող կացարան», ինչը նշանակում է, որ նրանք կացարան, ինչպես նաև հոգեկան առողջությանը առնչվող և այլ աջակցող ծառայություններ են տրամադրում: Այնուամենայնիվ, պահանջարկը բավարարելու համար չկան բավարար չափով և մատչելի կացարաններ և շատ ծրագրերում գործում են սպասողների ցանկեր: Այս տեղեկատվական թերթիկում տրամադրվում է տեղեկատվություն մատչելի և աջակցող կացարանային ռեսուրսների մասին՝ ձեզ անհրաժեշտ կացարանը գտնելու և դրա համար դիմելու գործում ձեզ օգնելու համար:

## **2. Կալիֆորնիայում հոգեկան առողջության անկարողություններ ունեցող շատ անօթևան մարդիկ կան:**

Այո: Կալիֆորնիայի ավելի քան 133 000 բնակիչներ անօթևան են: Դրանց մոտավորապես մեկ քառորդը համարվում է «կայուն անօթևան», և դրանք սահմանվում են որպես մարդիկ, ովքեր անօթևան են արդեն մեկ տարի, կամ անօթևան են եղել չորս անգամ վերջին երեք տարիների ընթացքում: Այդ անձինք պետք է որ նաև անկարողությանը հանգեցնող առողջական կամ հոգեկան առողջությանը առնչվող վիճակ ունենան: Հետազոտողների գնահատականով Կալիֆորնիայում անօթևան է հոգեկան առողջության լուրջ անկարողություններ ունեցող մոտ 12 000 մարդ:

## **3. Կալիֆորնիայի նահանգում տրամադրում է առակցություն կացարանների հարցում:**

Այո: 2004 թվականի նոյեմբերին, նահանգի ընտրողները ընդունեցին 63-րդ Առաջարկը՝ Հոգեկան առողջության ծառայությունների մասին օրենքը (MHSA): Ըստ այդ օրենքի տարեկան մեկ միլիարդ դոլար է տրամադրվում՝ մեկ միլիոն դոլարը գերազանցող անձնական եկամտի համար 1 տոկոսի չափով հարկ սահմանելու միջոցով: Այդ դրամական միջոցների մի մասը օգտագործվում է հոգեկան առողջության անկարողություն ունեցող անօթևան մարդկանց մշտական աջակցային կացարան տրամադրելու համար:

Կալիֆորնիայում կան կացարանների տրամադրման ավելի քան երեք տասնյակ ծրագրեր: Ծրագրերի մեծ մասը իրականացնում են Կալիֆորնիայի բնակարանային ապահովման և համայնքի զարգացման վարչությունը (HCD) և Կալիֆորնիայի բնակարանային ապահովման ֆինանսավորման գործակալությունը (CalHFA): Եզակի բացառություններով, փոխառությունները և դրամաշնորհները տրամադրվում են ոչ փե անձանց, այլ տեղական պետական գործակալություններին, շահույթ չհետապնդող կազմակերպություններին, ինչպես նաև շահույթ հետապնդող՝ բնակարանաշինությամբ զբաղվող ընկերություններին և ծառայություններ մատուցողներին: Այդ ծրագրերի համար պայմանունակ մարդկանց տրամադրվում են կացարանի նպաստներ: CalHFA-ն տրամադրում է ծածր

տոկոսով փոխառություններ՝ վարձով տրվող բնակարանների շինարարությամբ զբաղվող ընկերություններին և առաջին անգամ բնակարան գնող մարդկանց՝ մատչելի կացարան ձեռք բերելու և պահպանելու համար:

- Տես <http://calhfa.ca.gov/multifamily/mhsa/projects/index.htm> CalHFA-ի կողմից ֆինանսավորվող՝ հոգեկան առողջության անկարողություններ մարդկանց համար կացարանի հարցում աջակցություն տրամադրող ծրագրերի ցանկի համար:
- Տես [www.hcd.ca.gov/fa](http://www.hcd.ca.gov/fa) HCD ծրագրերի մասին տեղեկություններ ստանալու համար:
- Տես <http://calhfa.ca.gov/multifamily/mhsa/2013-04SemiAnnualReport.pdf> MHSА գույքի ամբողջական ցանկի համար՝ գործող և բնակարանաշինության համար առաջարկվող: Այլ գույքը կարելի է գտնել տարեկան զեկույցի վիճակագրական հավելվածում՝ աղյուսակ III-7, Ծրագրերի ցանկ, <http://calhfa.ca.gov/about/financials/reports/2012-2013Supplement.pdf> :

Կալիֆորնիայի հարկային լրավճարների տրամադրման հարցերով հանձնաժողովը (TCAC) նույնպես ֆինանսական աջակցություն է տրամադրում բնակարանաշինությամբ զբաղվող ընկերություններին, ներառյալ նրանց, ովքեր զբաղվում են աջակցությամբ իրականացվող բնակարանաշինությամբ:

Տես քարտեզը՝ <http://www.treasurer.ca.gov/ctcac/projects.asp>, ձեր տարածքում ծրագրեր գտնելու համար, օ օգտագործեք մկնիկը կամ սեղմեք «ծրագրերի ցանկի» վրա TCAC-ի կողմից ֆինանսավորված յուրաքանչյուր ծրագրի մասին տեղեկություններ ստանալու համար:

#### **4. Գործում են դաշնային ծրագրեր:**

Այո: Մատչելի կացարանների ոլորտում գործում են բազմազան դաշնային ծրագրեր: Օրինակ՝

- Համայնքի զարգացման միանվագ դրամաշնորհի ծրագրի (CDBG) շրջանակներում ֆինանսավորում է տրամադրվում տեղական ինքնակառավարման մարմիններին և Կալիֆորնիայի նահանգին՝ մատչելի կացարաններ, ենթակառուցվածքներ և համայնքային հարմարություններ ապահովելու նպատակով:
- Արտակարգ իրավիճակներում տրամադրվող ապաստանի դաշնային ծրագիրը ֆինանսավորում է տրամադրում ապաստանների, անցումային տիպի կացարանների, օժանդակ սարքերի և անօթևանության կանխիմանը ուղղված աջակցության համար:
- Անօթևաններին աջակցության դրամաշնորհների շրջանակներում դինանսական միջոցներ են տրամադրվում ապաստանների, աջակցող կացարանների, մեկ սենյակում վերականգնման կացարանների բնակարանաշինության նպատակների և «Կացարան և Խնամք» ծրագրի համար
- HOME ներդրումային գործընկերային ծրագիրը տրամադրում է ֆինանսավորում մատչելի կացարանների առաջարկի մակարդակը բարձրացնելու համար:
- Պետական բնակարանաշինական մարմինները դրամական միջոցներ են ստանում ԱՄՆ բնակարանաշինության և քաղաքաշինության վարչությունից (HUD)՝ պետական կացարաններ տրամադրելու և Կացարանի ընտրություն վաուչերային ծրագրի (որը հայտնի է նաև որպես Բաժին 8 Ծրագիր) շրջանակներում աջակցություն տրամադրելու համար: Բնակարանաշինության ոլորտի մարմինները վարում են այդ ծրագրերի շահառուների սպասելացանկեր, որոնց մեջ սովորաբար ազատ տեղ չի լինում:
- Վետերանների ադմինիստրացիայի փոխառության ապահովման ծրագիրը խթանում է, որպեսզի մասնավոր փոխառություն տրամադրողները վետերաններին բնակարանային վփոխառություններ տրամադրեն: Փոխառուն դիմում է բնակարանային փոխառության համար, և ապա դիմում է VA-ին՝

փոխառությունը երաշխավորելու համար Նախատեսվում է այս ծրագրի ընդլայնում:

- ԱՄՆ Գյուղատնտեսության վարչության Բնակարանային ապահովման և համայնքային աջակցության ծրագրի շրջանակներում փոխառություններ և դրամաշնորհներ են տրամադրվում գյուղերում բնակարանային ապահովման և համայնքային աջակցության համար:
- Հնդկացիների փոխառության ծրագրի 184-րդ Բաժինը նախատեսված է առանձին պայմանունակ բնիկ ամերիկացիներին, ցեղերին և Հնդկացիների բնակարանային ապահովման հարցերով մարմիններին բնակարանների սեփականության, գույքի վերականգման, նոր շինարարության և վերաֆինանսավորման հնարավորություններ առաջարկելու համար:

Այս ծրագրերից շատերը կառավարում է HUD-ը և դրանք իրականացնում են տեղական ինքնակառավարման մարմինները կամ բնակարանային ապահովման հարցերով տեղական մարմինները: Դուք պետք է պետական բնակարանային ապահովման դիմեք Բնակարանային ապահովման հարցերով ձեր տեղական մարմին: Մասնավոր բնակարանային ապահովման համար դիմելու դեպքում՝ ներառյալ 8-ր դբաժնով նախատեսվող բնակարանները՝ դիմումները պետք է լրացվեն այն առանձին բնակարանային համալիրում կամ մասնավոր տանը, որն իրավասություն ունի նման կերպով լրավճարվող բնակարաններ տրամադրելու:

- HUD կողմից վարձակալությանը տրամադրվող աջակցության և բնակարանային ապահովման ոլորտում պետական ծրագրերի մասին լրացուցիչ տեղեկությունների համար տես [http://portal.hud.gov/hudportal/HUD?src=/topics/rental\\_assistance#assistance](http://portal.hud.gov/hudportal/HUD?src=/topics/rental_assistance#assistance)

## **5. Ինչպե՞ս կարող եմ լրացուցիչ տեղեկություններ ստանալ մատչելի բնակարանների մասին:**

Մշտական աջակցվող բնակարանային ապահովման համար տես *Disability Rights California's*–ի տեղեկատվական թերթիկը, Աջակցվող բնակարանային ապահովում՝ *Ըստ Հոգեկան առողջության ծառայությունների օրենքի*:

Կապնվեք HUD–ի Պետական և Հնդկացիների համար նախատեսված բնակարանային ապահովման հարցերով շահառուների սպասարկման կենտրոն՝ ստանալու համար տեղեկատվություն նրա վերաբերյալ, թե ինչպես գտնել և դիմել պետական կամ HUD կողմից լրավճարվող բնակարանների համար 1-800-955-2232 հեռախոսահամարով կամ [http://portal.hud.gov/hudportal/HUD?src=/topics/rental\\_assistance](http://portal.hud.gov/hudportal/HUD?src=/topics/rental_assistance) հասցեով:

Վարձով տրվող մատչելի բնակարանների ցանկը կարելի է գտնել HCD–ի Վարձով տրվող մատչելի բնակարանների ցանկում <http://www.hcd.ca.gov/fa/affordable-housing.html>:

Կապնվեք Պետական բնակարանային ապահովման հարցերով մարմնի (PHA) հետ՝ ստանալու համար լրացուցիչ տեղեկություններ բնակարանային ապահովման ոլորտում տրամադրվող պետական աջակցության ծրագրերի մասին, ինչպիսին է օրինակ՝ Բաժին 8-ը և «Ապաստան և Խնամք» ծրագիրը: Որոշ PHA–ներ նաև անմիջոպես են կառավարում բնակարանային ապահովման պետական ծրագրերը: Կալիֆորնիայում PHA–ների ցանկի համար տեսեք՝ [www.hud.gov/offices/pih/pha/contacts/states/ca.cfm](http://www.hud.gov/offices/pih/pha/contacts/states/ca.cfm)

Որոշ քաղաքներ, վարչաշրջաններ և անկախ գործակալություններ տպագրել են ուղեցույցեր մատչելի բնակարաններ փնտրելու և դրանց դիմելու վերաբերյալ: Օրինակ՝ տես Հյուսիսային Կալիֆորնիայի Շահույթ չհետապնդող բնակարանային հարցերով ասոցիացիայի «*Ինչպես մատչելի բնակարան գտնել*» ուղեցույցը [http://www.nonprohousing.org/pdf\\_pubs/AffordableHousingPacket.pdf](http://www.nonprohousing.org/pdf_pubs/AffordableHousingPacket.pdf) և Սանտա Կլարա Վարչաշրջանի բնակարանների որոնման ուղեցույցը՝ <http://www.scchousingsearch.org/> :

## **6. Ինչպե՞ս են տեղական ինքնակառավարման մարմինները գնահատում բնակարանային կարիքները:**

Կալիֆորնիայի օրենքով պահանջվում է, որ մարդկանց բնակարանային կարիքները՝ անկախ նրանց եկամտի մակարդակից պետք է գնահատվեն տեղական մակարդակում և նորացվեն յուրաքանչյուր հինգ տարին մեկ: Ծրագիրը անվանվում է Բնակարանային տարր:

Բնակարանային տարրի վրաբերյալ նահանգային օրենքով պահանջվում է ռեսուրսների լրակազմ և սահմանափակումներ՝ տեղի բնակիչների կարիքները հոգալու և անկարողություններ ունեցող մարդկանց հատուկ բնակարանային կարիքները վերլուծելու առումով: Ըստ դրա պահանջվում է, որ ծրագրերի շրջանակներում վերացվեն անկարողություններ ունեցող մարդկանց բնակարան ստանալու ճանապարհին գոյություն ունեցող խոչընթոյսները՝ ներառյալ հոգեկան առողջության առումով մարտահրավերների հետ առերեսվող մարդկանց համար:

Տեղեկատվության համար, թե ինչպես բնակարանային տարրերը կարող են ուղեցույց հանդիսանալ MHPA ծրագրերի համար, տեսեք՝ [http://www.hcd.ca.gov/hpd/housing\\_element2/GS\\_beforeYouBegin.php](http://www.hcd.ca.gov/hpd/housing_element2/GS_beforeYouBegin.php)

## **7. Արդյո՞ք բնակարանային իրավունքների վերաբերյալ առկա է այլ տեղեկատվություն:**

Այո: Կարող եք կապվել ԱՄՆ Բնակարանային ապահովման և քաղաքաշինության վարչություն (800) 669-9777 հեռախոսահամարով, TDD՝ (800)927-9275) կամ [www.hud.gov](http://www.hud.gov):

Կարող եք կապվել Կալիֆորնիայի արդար զբաղվածության և բնակարանային ապահովման վարչություն (DFEH) (800) 233-3212 հեռախոսահամարով, TTY՝ (800) 700-2320), կամ [www.dfeh.ca.gov](http://www.dfeh.ca.gov):

Կարող եք արդար բնակարանային ապահովման հարցերով զբաղվող՝ երկրում սփռված կազմակերպությունների ցանկը գտնել [www.fairhousing.com](http://www.fairhousing.com) հասցեում:

## **8. Կա՞ն փաստաբաններ, որոնք կարող են օգնել բնակարան գտնել:**

Այո: Շատ իրավաբանական աջակցության գրասենյակներ և իրավական ծառայություններ տրամադրող այլ գործակալություններ տրամադրում են անվճար կամ ցածրարժեք խորհրդատվություն և ներկայացուցչություն արդար բնակարանային ապահովման հարցերով: Կալիֆորնիայում առկա իրավաբանական աջակցության գրասենյակների և այլ իրավաբանական ծառայությունների ցանկը կարելի է գտնել [lawhelpca.org](http://lawhelpca.org) հասցեում:

Անկարողության առկայության հիման վրա բնակարանային ապահովման հարցում խտրականության վերաբերյալ տեղեկություններ, աջակցություն և տպագիր նյութեր ստանալու համար կարող եք կապնվել Disability Rights California՝ (800) 776-5746 հեռախոսահամարով, TTY՝ (800) 649-0154, կամ [www.disabilityrightsca.org](http://www.disabilityrightsca.org) :

Վաշինգթոն Դի-Սի-ում գտնվող Հոգեկան առողջության Բազելոն կենտրոնը հրատարակում է տեղեկատվական թերթիկներ և այլ տպագիր նյութեր հետևյալ հասցեով՝ <http://www.bazelon.org/Where-We-Stand/Community-Integration/Housing.aspx>:

Ցանկանում ենք, որ կապնվեք մեզ հետ: Այս տեղեկատվական թերթիկը կարդալուց հետո խնդրում ենք լրացնել այս կարճ հարցաթերթիկը և տալ մեզ ձեր գնահատականը:

Անգլերեն տարբերակը՝

<http://fs12.formsite.com/disabilityrightsca/form54/index.html>

Իսպաներեն տարբերակը՝

<http://fs12.formsite.com/disabilityrightsca/form55/index.html>

*Disability Rights California–ն ֆինանսավորվում է մի շարք աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկը տեսնելու համար այցելեք*

<http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html> :



Կալիֆորնիայի հոգեկան առողջությանը առնչվող ծրագրերի մարմինը (CaIMHSA) վարչաշրջանների կառավարությունների կազմակերպություն է, որը աշխատում է անհատների, ընտանիքների և համայնքների համար հոգեկան առողջությանը առնչվող խնդիրների հանգուցալուծումը դյուրացնելու ուղղությամբ: *CaIMHSA կողմից իրականացվող 'Կանխարգելման և Վաղ միջամտության ծրագրերը ֆինանսավորվում են վարչաշրջանների կողմից՝ ընտրողների կողմից հաստատված Հոգեկան առողջության ծառայությունների մասին օրենքով (թիվ 63 Առաջարկ): Թիվ 63 Առաջարկով նախատեսվում է այն ֆինանսավորումը և շրջանակը, որն անհրաժեշտ է հոգեկան առողջության ծառայությունները չսպասարկվող բնակչությանը և Կալիֆորնիայի բազմաբնույթ համայնքներին առաջարկելու համար:*



WELLNESS • RECOVERY • RESILIENCE

